**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

**2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2-ՐԴ ԾՐԱԳԻՐ» ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱ-ՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան 2 սեպտեմբերի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Ա. Ասատրյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2014 թվականի մայիսի 23-ին Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ ստորագրված՝ «Սոցիալական պաշտպանության վարչարարության 2-րդ ծրագիր» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2014 թվականի օգոստոսի 22-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Սոցիալական պաշտպանության վարչարարության 2-րդ ծրագիր» ֆինանսավորման համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) կնքվել է 2014 թվականի մայիսի 23-ին՝ Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ:

2. Համաձայնագրի նպատակն է՝ Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 13.900.000 Հատուկ փոխառության իրավունքին համարժեք վարկ՝ Համաձայնագրով նախատեսված Ծրագրի նպատակներն իրականացնելու համար, մասնավորապես՝ սոցիալական պաշտպանության ծառայության մատուցումը բարելավելու եւ սոցիալական պաշտպանության նպաստներ վճարող եւ ծառայություններ մատուցող մարմինների վերլուծական, մշտադիտարկման ու գնահատման գործառույթները հզորացնելու համար:

Ծրագրով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, հարկերի մասով, 20 տոկոս համաֆինանսավորում: Վարկի մարման ժամկետը 25 տարի է, որից արտոնյալ ժամկետը՝5 տարի:

Ծրագիրը բաղկացած է թվով հինգ բաղադրիչներից.

- ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում,
- աշխատանքի եւ զբաղվածության ոլորտի բարեփոխումների իրականացում,
- կենսաթոշակային համակարգի արդիականացում,
- աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության վերլուծական կարողությունների, մոնիթորինգի եւ գնահատման համակարգի զարգացում,
- Ծրագրի կառավարում:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետեւյալ հիմնական պարտավորությունները.

- առհանել ֆինանսավորման հասույթները՝ Համաձայնագրի առդիր 2-ի Բաժին 4-րդի համաձայն,

- ֆինանսավորման չառհանված մնացորդի դիմաց վճարել պարփավճար՝ փարեկան մեկ փոկոսի կեսից ոչ ավելի դրույքաչափով,

- առհանված վարկային մնացորդի դիմաց վճարել սպասարկման վճար՝ փարեկան մեկ փոկոսի երեք քառորդին հավասար չափով,

- առհանված վարկային մնացորդի դիմաց վճարել փոկոսավճար՝ փարեկան մեկ ամբողջ քսանհինգ փոկոսի չափով,

- վարկի մայր գումարը մարել Համաձայնագրի առդիր 3-ում սահմանված մարման ժամանակացույցին համապատասխան,

- Ծրագրի պատշաճ վերահսկման, համակարգման եւ իրականացման նպատակով՝ Ծրագրի ուժի մեջ մտնելուն հաջորդող մեկամսյա ժամկետում ստեղծել Կառավարման խորհուրդ, որը պատասխանատվություն կկրի Ծրագրին առնչվող կարեւոր որոշումների, դրա իրականացման ընդհանուր ընթացքը մշտադիտարկելու եւ առաջացող խնդիրները կարգավորելու համար,

- ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կազմում ստեղծել Ծրագրի համակարգման գրասենյակ, որը կրում է Ծրագրի միջոցառումների ընդհանուր տեխնիկական համակարգման, նախապատրաստման, իրականացման, մշտադիտարկման եւ գնահատման պատասխանատվություն,

- Ընկերակցության հաստատմանը ներկայացնել ակտիվ աշխատաշուկայի ծրագրի շրջանակներում որակավորում չունեցող երիտասարդներին եւ/կամ ինքնազբաղվածության ու փոքր բիզնեսի խթանմանն ուղղված պիլոտային ծրագրերի նախագծման եւ իրականացման մանրամասն առաջարկ, այնուհետեւ՝ Ընկերակցության պահանջները բավարարող տեխնիկական առաջադրանքի համաձայն պատրաստել որակավորում չունեցող երիտասարդներին եւ ինքնազբաղվածության ու փոքր բիզնեսի խթանմանն ուղղված գործառնական ձեռնարկներ, որոնք կպարունակեն տեխնիկական, վարչական, գնումների, շրջակա միջավայրի եւ սոցիալական, ֆինանսական, հաշվապահական հաշվառման, մշտադիտարկման եւ գնահատման մանրամասն ընթացակարգեր, մեխանիզմներ եւ ներկայացնել Ընկերակցության ուսումնասիրմանն ու հաստատմանը,

- գործառնական ձեռնարկները հաստատելուց հետո՝ ոչ ուշ, քան քառասունհինգ օրվա ընթացքում ձեւավորել եւ իրականացնել Ծրագրի իրականացման ողջ ընթացքում

բողոքարկման հասանելի մեխանիզմ, որն ընդունելի կլինի Ընկերակցության կողմից, եւ որի նպատակն է շահառուների ընտրությանը եւ կանխիկ դրամաշնորհների տրամադրմանն առնչվող բողոքների կարգավորումը,

- Ընկերակցության պահանջները բավարարող պայմաններով իրականացնել հանրային իրազեկման, տեղեկատվական քարոզարշավներ՝ պիլոտային ծրագրերի եւ կանխիկ դրամաշնորհների վճարման վերաբերյալ,

- նախքան Ծրագրի Մաս II.2 (ա)-ի իրականացման մեկնարկն ապահովել Ընկերակցության պահանջները բավարարող պայմաններով եւ որակավորում չունեցող երիտասարդ շահառուների, գործատուների եւ այլ կազմակերպությունների միջեւ վերապատրաստման մասին համապատասխան համաձայնագրերի կնքումը եւ այդպիսի համաձայնագրի օրինակելի ձեւը Ընկերակցության ուսումնասիրմանն ու հաստատմանը ներկայացնելը, ինչպես նաեւ ապահովել, որ այդ համաձայնագրերը կատարվեն պատշաճ խնամքով եւ արդյունավետությամբ, Ընկերակցության պահանջները բավարարող տեխնիկական, ֆինանսական եւ կառավարչական չափանիշների եւ պրակտիկայի, այդ թվում՝ Հակակոռուպցիոն ուղեցույցների համաձայն,

- Ծրագիրն իրականացնել երաշխիքային շրջանակների եւ երաշխիքային բոլոր փաստաթղթերի համաձայն,

- իրականացնել Ծրագրի առաջընթացի մշտադիտարկում ու գնահատում եւ ներկայացնել հաշվետվություններ Ընկերակցության համար ընդունելի ցուցանիշների հիման վրա,

- վարել կամ ապահովել ֆինանսական կառավարման համակարգը,

- պատրաստել եւ յուրաքանչյուր օրացուցային կիսամյակի ավարտից ոչ ուշ, քան քառասունհինգ (45) օր հետո Ընկերակցությանը ներկայացնել վերջինիս պահանջները բավարարող ձեւաչափով եւ բովանդակությամբ միջանկյալ, առողջ չանցած Ծրագրի ֆինանսական հաշվետվություններ, որոնք հանդիսանում են Ծրագրի մասին հաշվետվության մաս եւ ընդգրկում են տվյալ կիսամյակը:

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները բխում են ՀՀ Սահմանադրությամբ պետության առջեւ դրված սոցիալական խնդիրների լուծման անհրաժեշտությունից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

**1.** 2014 թվականի մայիսի 23-ին Հայաստանի Հանրապետության եւ Միջազգային զարգացման ընկերակցության միջեւ ստորագրված՝ «Սոցիալական պաշտպանության վարչարարության 2-րդ ծրագիր» ֆինանսավորման համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

**2.** Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2 սեպտեմբերի 2014 թվականի
ՍԴՈ-1160